«Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանի նախագիծ

Նախագիծ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.2-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել «Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և Հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը»՝ համաձայն Հավելվածի։
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2021 թվականի -ի N Ն հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման, հրատարակման և Հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման հետ կապված իրավահարաբերությունները:

II. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2. Հանրակրթական առարկաների դասագրքերին ներկայացվող ընդհանրական պահանջներն են.

1) դասագիրքը պետք է համապատասխանի Հանրակրթության պետական չափորոշչի, տվյալ առարկայի չափորոշչի և ծրագրի պահանջներին և ներկայացնի տվյալ առարկայի կամ դրա մի մասի հիմնական

բովանդակությունը,

2) դասագիրքը պետք է ներկայացնի միայն ստույգ, գիտականորեն հաստատված և ճշգրիտ տեղեկատվություն, վարկածների վերաբերյալ տեղեկատվության ընդգրկման պարագայում՝ հստակ նշում պարունակի այդ մասին, օգտագործի միայն գիտականորեն շրջանառվող վարկածներ,

3) դասագրքում պետք է ապահովված լինեն պատշաճ հղումները (այդ թվում՝ էլեկտրոնային հասցեների հղումներ) օգտագործված բոլոր նյութերին և աղբյուրներին,

4) դասագիրքը պետք է հնարավորություն ընձեռի բազմակողմանիորեն ծանոթանալու ներկայացվող նյութին կամ թեմային և նպաստի սովորողի մոտ դրա վերաբերյալ սեփական դիրքորոշման ու կարծիքի ձևավորմանը,

5) դասագրքի շարադրանքի լեզուն պետք է համապատասխանի տվյալ տարիքային խմբի լեզվամտածողության առանձնահատկություններին՝ խուսափելով մասնագիտական և գիտական եզրույթների անհարկի գործածումից, երկարաշունչ նախադասություններից՝ կիրառելով հնարավորինս պարզ կառուցվածքով և հասկանալի բովանդակությամբ նախադասություններ,

6) դասագրքում պետք է օգտագործվեն տեղեկատվության փոխանցման տարբեր եղանակներ՝ տեքստային, պատկերային, գրաֆիկական, թվային և այլ՝ փոխլրացման և համադրման սկզբունքով՝ խուսափելով կրկնություններից,

7) դասագրքի կառուցվածքը պետք է համապատասխանի ներքոգրյալ մեթոդական պահանջներին.գլուխների և պարբերությունների դասավորում, ներքին ամբողջականություն, հստակություն, տրամաբանական հաջորդականություն, եզրակացությունների հակիրճություն, պարզություն, ներկայացման արտահայտչություն ու պատկերացումների, նկարագրդումների, ճշգրիտ և բազմազան հարցերի, պայմանների ու առաջադրանքների այնպիսի կառուցվածք, որը սովորողներից պահանջում է կատարել մտավոր գործողություններ, նշումներ, ուրվագծեր, գծանկարներ, հաշվարկներ, գործնական աշխատանք, փորձեր և այլն։

3. Դասագրքի էջերը չպետք է գերազանցեն՝

1) 176 էջը (11 մամուլ)՝ տարրական և միջին դասարաններում՝ հումանիտար և հասարակագիտական բնագավառների համար,

2) 144 էջը (9 մամուլ)՝ տարրական և միջին դասարաններում՝ բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի բնագավառի համար,

3) 192 էջը (12 մամուլ)՝ ավագ դասարաններում՝ հումանիտար և հասարակագիտական բնագավառների համար,

4) 160 էջը (10 մամուլ)՝ ավագ դասարաններում՝ բնագիտության, տեխնոլոգիայի, ճարտարագիտության և մաթեմատիկայի բնագավառի համար։

4. Դասագիրքը կարող է լինել թղթային, էլեկտրոնային կամ հիբրիդ (համակցված)։
5. Թղթային դասագիրքը ունենում է իր թվայնացված տարբերակը, որը ձեռք է բերվում դասագրքի հետ միաժամանակ։
6. Հիբրիդ դասագիրքը թղթային դասագիրքն է, որի մեջ ներառված է թվային բովանդակություն։
7. Դասագրքերի օգտագործման նվազագույն ժամկետը (տվյալ առարկայի չափորոշչի և ծրագրի պահանջների անփոփոխ մնալու դեպքում)՝

1) տարրական դասարաններում՝ առնվազն 3 տարի է,

2) միջին և ավագ դասարաններում՝ առնվազն 5 տարի,

3) էլեկտրոնային դասագրքերի գործածության ժամկետը՝ առնվազն 7 տարի է։

8. Դասագրքերի օգտագործման ժամկետներն ամրագրվում են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով։
9. Թղթային և էլեկտրոնային դասագրքերի վերարտադրության համար օգտագործվում են սովորողի ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) կողմից դասագրքերի օգտագործման համար ներդրված գումարները։ Թղթային և էլեկտրոնային դասագրքերի համար ներդրումային գումարները տարբեր են։
10. Սովորողը, ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) գրավոր համաձայնության դեպքում, կարող է հրաժարվել թղթային դասագրքերից և օգտվել էլեկտրոնային դասագրքերից։

III. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

11. Հանրակրթական առարկաների դասագրքերի գնումն իրականացվում է՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով,

2) հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Հաստատություն)՝ առանձնացված բանկային հաշիվներում առկա ներդրումային գումարների միջոցներով,

3) օրենքով չարգելված այլ միջոցներով։

12. Դասագրքերի ստեղծումն ու հրատարակումն իրականացվում է մրցութային եղանակով։
13. Դասագրքերի ստեղծման և հրատարակման համար անցկացվում են առանձին մրցույթներ։
14. Դասագրքերի ստեղծման մրցույթին կարող են մասնակցել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձինք։
15. Պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող դասագրքերի

ստեղծման և հրատարակման մրցույթները կազմակերպում և անցկացնում է կրթության կառավարման պետական լիազոր մարմինը։ Հաստատությունների սովորողների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) դասագրքերի համար ներդրումային գումարներով ֆինանսավորվող դասագրքերի ստեղծման և հրատարակման մրցույթները կազմակերպում և անցկացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից ձևավորված հանձնաժողովը, որում ընդգրկվում է Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը (այսուհետ՝ ԴՏՀՏՇՀ)։

16. Դասագրքերի ստեղծման մրցույթի պարտադիր բաղադրիչն է մրցույթին ներկայացված հավակնորդ դասագրքերի փորձաքննությունը, որն իրականացվում է սույն կարգով ձևավորված հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների (այսուհետ՝ հանձնաժողովներ) կողմից։
17. Դասագրքերի ստեղծման մրցույթի ընթացքում ներկայացված հավակնորդ դասագրքերի փորձաքննությունը իրականացվում է հետևյալ փուլերով՝

1) **համապատասխանության փուլ**: Այս փուլում գնահատվում է ներկայացված հավակնորդ դասագրքում նյութի գիտական համապատասխանությունը՝ «**ԱՅՈ՛, համապատասխանում է**» և «**Ո՛Չ, չի համապատասխանում**» գնահատականներով։ Գիտական համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է հավակնորդ դասագիրքը ստեղծողի կողմից և իրենից ներկայացնում է առնվազն երկու մասնագիտական համապատասխան կառույցների կամ մասնագետների եզրակացություն՝ հավակնորդ դասագրքի գիտական համապատասխանության վերաբերյալ։ Գիտական համապատասխանության վերաբերյալ մասնագիտական եզրակացություն տված կառույցների և մասնագետների տվյալները ներառվում են դասագրքում։

2) **Բովանդակային գնահատման փուլ**: Հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման մրցույթին ներկայացված հավակնորդ դասագրքերի բովանդակային գնահատումն իրականացվում է հանձնաժողովների կողմից՝ նախապես սահմանված բովանդակային չափանիշներին, դրանց համապատասխան բնութագրիչներին, մշակված գնահատման սանդղակին համապատասխան։ Հանձնաժողովների կողմից սահմանվում է դասագրքերի անցողիկ բովանդակային շեմ։ Բովանդակային շեմն անցած հավակնորդ դասագրքերն անցնում են փորձաքննության հաջորդ փուլ։

3) **Վարկանիշային գնահատման փուլ**: Այս փուլում բովանդակային շեմն անցած հավակնորդ դասագրքերը ներկայացվում են ուսուցիչների վարկանիշային գնահատմանն առցանց եղանակով՝ հրապարակվելով ԴՏՀՏՇՀ-ի պաշտոնական կայքում։ Վարկանիշային գնահատման համար տրվում է 15 օր՝ հաշված հրապարակման օրվանից։ Վարկանիշային գնահատումն իրականացվում է 10 միավորանի սանդղակով։ 7 և ավելի միավոր վարկանիշային գնահատական ստացած հավակնորդ դասագրքերն ընդգրկվում են հանրակրթական առարկաների երաշխավորված դասագրքերի ցանկում։

18. ԴՏՀՏԾՀ-ի պաշտոնական կայքում ստեղծվում է հանրակրթական առարկաների երաշխավորված դասագրքերի շտեմարան, որտեղ ներառված յուրաքանչյուր դասագրքի համար տեղադրվում է վերջինիս փորձաքննության մանրամասն տեղեկանքը՝ յուրաքանչյուր փուլի արդյունքներով։
19. Յուրաքանչյուր տարի մինչև հունվարի 25-ը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) կողմից հաստատվում են տվյալ ուսումնական տարվա համար գործածության երաշխավորված հանրակրթական առարկաների դասագրքերի ցանկը և դրանց գործածության ժամկետները։
20. Հաստատությունների կողմից ներկայացված տեղեկատվության ամփոփման արդյունքներով ԴՏՀՏԾՀ-ի կառավարման ավտոմատացված համակարգում (այսուհետ՝ ԿԱՀ) ձևավորվում է գալիք ուսումնական տարվա համար դասագրքերի պատվերը (այսուհետ՝ պատվեր)։
21. Պատվերի հիման վրա՝ պետական բյուջեից ֆինանսավորման դեպքում՝ կրթության կառավարման պետական լիազոր մարմինը, և Հաստատությունների ներդրումային միջոցներից ֆինանսավորման դեպքում՝ ԴՏՀՏԾՀ-ն, կազմակերպում են Հաստատությունների կողմից ընտրված դասագրքերի հրատարակման մրցույթ։
22. Դասագրքերի հրատարակման մրցույթն իրականացվում է Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքին համապատասխան։
23. Հանրակրթական ուսումնական առարկաների դասագրքեր կարող են ստեղծվել և հրատարակվել կրթության կառավարման պետական լիազոր մարմնի կողմից՝ պետական պատվերի շրջանակներում։ Պետական պատվերի պարագայում՝ հանրակրթական ուսումնական առարկաների դասագրքերը կարող են ստեղծվել ոչ մրցութային եղանակով՝ ուղիղ պատվերի միջոցով։

IV.ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԻՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

24. Հանձնաժողովների գործունեության նպատակն է հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման մրցույթին ներկայացված հավակնորդ դասագրքերի փորձաքննությունը (այսուհետ՝ փորձաքննություն)։
25. Հանձնաժողովները ձևավորվում են հանձնաժողովների անդամների թեկնածուների՝ պաշտոնապես առաջադրված և համակարգչում զետեղված անվանացանկից։
26. Նախարարության պաշտոնական կայքէջում հրապարակվում է հայտարարություն, որտեղ նշվում են այն պահանջները, որոնց պետք է բավարարի հանձնաժողովի անդամը։
27. Հանձնաժողովի անդամության թեկնածուներ (այսուհետ՝ թեկնածուներ) առաջադրվում են Նախարարության, գիտական և գիտահետազոտական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, պետական կառավարման տարածքային

մարմինների և Երևանի քաղաքապետարանի կողմից, ինչպես նաև անձնական նախաձեռնությամբ:

28. Հանձնաժողովի անդամին առաջադրվող պարտադիր պահանջներն են՝

1)բարձրագույն մասնագիտական կրթություն (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով),

2)մասնագիտական աշխատանքի առնվազն 7 տարվա ստաժ:

29. Հավասար պայմանների դեպքում նախապատվությունը տրվում է տարակարգ, կոչումներ, գիտական աստիճան, առավել երկար ստաժ ունեցող հավակնորդին:

- Թեկնածուն պետք է լրացնի անձնական թերթիկ, որտեղ պետք է ընդգրկվեն հետևյալ տվյալները.
- անունը, ազգանունը (հայրանունը), զբաղեցրած պաշտոնը, բնակության վայրը, հեռախոսահամարները՝ բնակարանային, աշխատանքային, բջջային, էլեկտրոնային փոստի հասցեն, կրթության, աշխատանքային ստաժի վերաբերյալ և այլ տվյալներ,
- այն առարկայի (առարկաների) անվանումը, որի դասագրքերի՝ հանրակրթության պետական չափորոշչին համապատասխանության գնահատման հանձնաժողովում թեկնածուն կարող է ընդգրկվել որպես հանձնաժողովի անդամ:

31. Նախարարությունը իրականացնում է հանձնաժողովի անդամների թեկնածուների ընտրություն՝ ըստ հետևյալ մասնագիտական ուղղությունների՝

1) տվյալ առարկայի դասավանդող ուսուցիչ,

2) մանկավարժ-մեթոդիստ,

3) մանկավարժ-հոգեբան,

4) հայոց լեզվի մասնագետ,

5) նկարիչ-ձևավորող,

6) բժիշկ-հիգիենիստ:

Յուրաքանչյուր մասնագիտական ուղղությունից ընտրվում է մինչև 5 թեկնածու՝ յուրաքանչյուր առարկայի համար:

32. Թեկնածուների ամբողջական անվանացանկը կարող է համալրվել և փոփոխվել դասագրքերի ստեղծման մրցույթի վերաբերյալ հայտարարություն տալու օրվանից առնվազն 6 ամիս առաջ:
33. Թեկնածուն չի կարող լինել հանձնաժողովի անդամ, եթե հանդիսանում է դասագրքերի ստեղծման մրցույթին ներկայացված հավակնորդ դասագրքի հեղինակ, համահեղինակ, խմբագիր, խորհրդատու, թարգմանիչ կամ որևէ այլ ուղղակի ձևով մասնակից է հավակնորդ

դասագրքի ստեղծմանը:

34. Հանձնաժողովի բոլոր անդամները գրավոր ներկայացնում են հայտարարություն՝ սույն կարգի 28-րդ կետի պահանջներին բավարարելու մասին:
35. Թեկնածուները Նախարարության միջոցով գրավոր տեղեկացվում են թեկնածուների ցուցակում ընդգրկված լինելու մասին՝ նախքան ցուցակի համակարգչում զետեղելը:

- Հանձնաժողովը կազմվում է համակարգչի կողմից պատահական ընտրված 5 թեկնածուներից՝ մրցույթն անցկացնելուց 2 աշխատանքային օր առաջ:

37. Եթե համակարգչի միջոցով ընտրված թեկնածուի (թեկնածուների)՝ հանձնաժողովի կազմում ընդգրկվելը (ժամանակավոր անաշխատունակության, բացակայության, 33-րդ կետով սահմանված և այլ պատճառներով) անհնարին է, ապա համակարգչի միջոցով ընտրվում է այլ թեկնածու:

- Հանձնաժողովի կազմում ընտրված անդամները, Նախարարության կողմից տեղեկացվում են հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման օրվա, ժամի և վայրի մասին՝ հանձնաժողովի կազմավորումից հետո՝ 24 ժամվա ընթացքում:
- Հանձնաժողովի կազմը հաստատվում է Նախարարի հրամանով, որով սահմանվում են նաև աշխատանքների կազմակերպման և դասագրքերի գնահատման պայմանները:
- Եթե գնահատման աշխատանքների ընթացքում հանձնաժողովի որևէ անդամի մասնակցությունը հանձնաժողովի հետագա աշխատանքներին դառնում է անհնար, ապա հանձնաժողովի կազմը համալրվում է սույն կարգի 37-րդ կետում նկարագրված սկզբունքով:

41. Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնում է սահմանված կարգով կազմը հաստատվելու պահից: Հանձնաժողովի լիազորությունները դադարեցվում են գնահատման արդյունքները ներկայացնելուց հետո: